

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

1.1 (24)

Естественные и физико-математические науки

(География и геология, информатика и прикладная математика, биология,
математика и механика, химия, фармацевтика, физика)

Natural and Physical-Mathematical Sciences

(Geography and Geology, Informatics and Applied Mathematics, Biology,
Mathematics and Mechanics, Chemistry, Pharmacy, Physics)

ЕРЕВАН - YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS
2018

ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1.1 (24)

Բնական և ֆիզիկամաթեմատիկական գիտություններ

(աշխարհագրություն և երկրաբանություն, ինֆորմատիկա և կիրառական
մաթեմատիկա, կենսաբանություն, մաթեմատիկա և մեխանիկա,
քիմիա, ֆարմացիա, ֆիզիկա)

Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издаётся по решению Ученого совета ЕГУ
Published by the resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

ա.գ.դ., պրոֆ. Թ. Վարդանյան
կ.գ.դ., պրոֆ. Լ. Նավասարդյան
ք.գ.դ., պրոֆ. Ն. Դուրգարյան
ա.գ.թ., դոց. Ս. Սուվարյան
ա.գ.թ., դոց. Գ. Ալեքսանյան
ա.գ.թ., դոց. Ա. Պոտոսյան
ե.գ.թ., դոց. Մ. Գրիգորյան
ե.գ.թ., դոց. Ռ. Մովսեսյան
կ.գ.թ., դոց. Հ. Փանոսյան
ք.գ.թ., դոց. Ի. Ալեքսանյան
ք.գ.թ., դոց. Ա. Մարտիրյան
կ.գ.թ. Ն. Ավթանդիլյան
ֆ.մ.գ.թ. Պ. Պետրոսյան

Редакционная коллегия:

д.г.н., проф. Т. Ваданян
д.б.н., проф. Л. Навасардян
д.х.н., проф. Н. Дургарян
к.г.н., доц. С. Суварян
к.г.н., доц. Г. Алексанян
к.г.н., доц. А. Потосян
к.г.н., доц. М. Григорян
к.г.н., доц. Р. Мовсесян
к.б.н., доц. О. Паносян
к.х.н., доц. И. Алексанян
к.х.н., доц. А. Мартирян
к.б.н. Н. Автандилян
к.ф.м.н. П. Петросян

Editorial Board

DSc, Prof. T. Vardanyan
DSc, Prof. L. Navasardyan
DSc, Prof. N. Durgaryan
PhD, Associate Prof. S. Suvaryan
PhD, Associate Prof. G. Aleksanyan
PhD, Associate Prof. A. Potosyan
PhD, Associate Prof. M. Grigoryan
PhD, Associate Prof. R. Movsesyan
PhD, Associate Prof. H. Panosyan
PhD, Associate Prof. I. Aleksanyan
PhD, Associate Prof. A. Martiryan
PhD N. Avtandilyan
PhD P. Petrosyan

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55 55 70, publishing@ysu.am

Հրատարակության նախապատրաստող ստորաբաժանում՝ ԵՊՀ ուսանողական գիտական
ընկերություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 60) 71 01 94,
Էլ. փոստ՝ sss@ysu.am
ԵՊՀ ՈՒԳԸ հրատարակումների կայք՝ www.ssspub.y-su.am.

**ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ
ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ**

Քանի որ ժամանակակից կրթությանը ներկայացվող «հասարակական պատվերն» է դպրոցականներին ոչ միայն զինել տարբեր գիտելիքներով, կարողություններով և հմտություններով, այլև սովորեցնել նրանց ինքնուրույն գտնել և յուրացնել հավաստի գիտելիքներ, կողմորոշվել անձանոթ իրավիճակներում, կայացնել գիտականորեն հիմնավորված որոշումներ՝ նպաստելով մեր մոլորակի բնապահպանական, սոցիալ-տնտեսական և քաղաքական հիմնախնդիրների հաղթահարմանը [2], հետևապես դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացումը ժամանակի հրամակայականն է:

Սույն հոդվածի գիտական խնդիրն է քննարկել աշխարհագրության ուսուցման գործընթացում դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացումը: Մեր կարծիքով վերջինիս լուծմանն ուղղված աշխատանքները պետք է սկսել հիմնական դպրոցում, քանի որ այդ գործընթացը ժամանակատար է և դպրոցականներին պետք է աստիճանաբար նախապատրաստել նախ ավագ դպրոցում, ապա՝ բուհերում հետազոտական աշխատանքներ իրականացնելու համար:

Ուսումնասիրելով առկա գրականությունը՝ նկատեցինք, որ շատ սահմանափակ են հայերենով այն աշխատանքները (գրքերը, գիտական հոդվածները, ձեռնարկները, ատենախոսությունները, առաջադրանքների կիրառման հանձնարարականները և այլն), որոնք աշխարհագրության ուսուցման գործընթացում ուղղված են հիմնական դպրոցի աշակերտների հետազոտական կարողությունների զարգացմանը:

Սույն հոդվածի նպատակն է անդրադառնալ աշխարհագրության դասավանդման մեթոդաբանության ուսուցման այն մեթոդներին, որոնք առավել արդյունավետ են դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման նպատակով կիրառելու համար, քանի որ համապատասխան ուսուցման մեթոդների տեղին օգտագործումն ապահովում է ցանկալի կրթական վերջնարդյունքներ: Նշենք, որ աշխարհագրության ուսուցման մեթոդները դասակարգվում են ըստ գիտելիքի ստացման աղբյուրի և իմացական գործունեության բնույթի [3]: Վերջինս ևս տարանջատվում է մեթոդների երկու մեծ խմբերի: Դրանք են բացատրացուցադրական (բացատրացուցադրական, ռեպրոդուկտիվ կամ վերհիշական) և ստեղծագործական (պրոբլեմային շարադրանք, մասնակի-որոնողական և հետազոտական) մեթոդները: Բացատրացուցադրական մեթոդների խումբը միտված է պատրաստի տեղեկությունների

փոխանցմանը և ուսուցչի անմիջական միջնորդությամբ դպրոցականների՝ գիտելիքների, կարողությունների որոշակի ծավալի ձեռքբերմանը: Հետազոտական կարողությունների զարգացման տեսանկյունից այն ունի սահմանափակ նշանակություն, քանի որ շատ մեծ է ուսուցչի ներգործությունը, իսկ դպրոցականներից պահանջվում է փոխանցված գիտելիքների յուրացում, պարզ վերարտադրություն:

Ստեղծագործական մեթոդները նպատակաուղղված են անձի ստեղծագործական գործունեության փորձի, ստեղծագործական կարողությունների և մտածողության զարգացմանը: Դրանք խթանում են նաև դպրոցականների ինքնուրույնությունը, բարձրացնում նրանց իմացական ակտիվությունը, զարգացնում ստեղծագործական և քննադատական մտածողությունը՝ հնարավորություն տալով ձևավորել սեփական կարծիք և դիրքորոշում, ներկայացնել այն տարբեր լսարաններում, զարգացնել կանխատեսելու, պլանավորելու և ստեղծագործական, հետազոտական կարողությունները:

Պրոբլեմային շարադրանքի մեթոդը միտված է դպրոցականներին իմացության բարդ ուղու ծանոթացմանը, որտեղ կիրառվում են որևէ բարդ հիմնահարցի ապացուցում պահանջող առաջադրանքներ: Այն նպաստում է հետազոտական հետևյալ կարողությունների զարգացմանը՝ կապեր ստեղծել տեղեկույթի տարբեր աղբյուրների միջև, մշակել տվյալներ և հաղորդել, զեկուցել արդյունքներ, մեղիայում ներկայացված տեղեկույթի վերլուծության և մեկնաբանման համար օգտագործել քննադատական գրագիտության կարողություններ: Օրինակ՝ 5-րդ դասարանում «Մթնոլորտ» թեմայի շրջանակներում օդի ջերմաստիճանի և մթնոլորտային ճնշման փոփոխություններն վերլնթաց ուղղությամբ դպրոցականներին աշխատանքի ընթացքում ներկայացվում է վիճակագրական տվյալներով՝ հնարավորություն տալով նրանց ինքնուրույն նկատել օրինաչափությունը, գտնել հիմնավորումներ:

Մասնակի-որոնողական մեթոդի նպատակն է դպրոցականին աստիճանաբար մոտեցնել ստեղծագործական աշխատանքին: Այս մեթոդը ենթադրում է ինքնուրույն գտնել նորն ու տրված տիպային պլանով աշխատանքից բացի կատարել լրացուցիչ որոշակի առաջադրանքներ՝ հենվելով ձեռք բերած գիտելիքների վրա: Այն նպաստում է հետազոտական հետևյալ կարողությունների զարգացմանը՝ հավաքել, գրանցել, ստուգել տվյալները, ճանաչել տեղեկատվության առաջնային և երկրորդական աղբյուրները, լուծումներ գտնելու և տեղեկացված որոշումների կայացնելու համար հավաքել և վերլուծել տվյալներ, ուսումնասիրել տարբեր աղբյուրներ, համեմատել, հակադրել և կապեր ստեղծել (մուլտի)մեղիայի տարբեր աղբյուրների միջև և այլն: Օրինակ՝ 6-րդ դասարանում Հարավային Ամերիայի բնական զոնաների վերաբերյալ գիտելիքների հիման վրա ուսումնասիրել Հյուսիսային Ամերիկայի բնական զոնաները՝ օգտվելով տիպային պլանից, բնական զոնաների քարտեզներից, համացանցից:

Հետազոտական մեթոդներն ուղղված են դպրոցականների համար ամբողջովին նոր թեմայի ուսումնասիրությանը: Դպրոցականները ձևակերպում (ցածր դասարաններում՝ ընտրում) են հետազոտության հարցը, կազմում (ցածր դասարաններում՝

առաջնորդվում տրված նմուշով) հետազոտության պլան, հավաքում, վերլուծում, ամփոփում տեղեկատվությունը, ներկայացնում հետազոտության արդյունքները: Այս մեթոդը միտված է և՛ տեղեկատվական, և՛ մեդիագրագիտության կարողությունների զարգացմանը: Օրինակ՝ 9-րդ դասարանում ՀՀ մարզերի ուսումնասիրության շրջանակներում դպրոցականներին կարելի է հանձնարարել գնահատել զբոսաշրջության զարգացման ներուժն ու հեռանկարները, կազմել մարզերի զբոսաշրջության կենտրոնների ցանկը, նախագծել երթուղիներ, հանդես գալ ոլորտի բարելավման առաջարկություններով:

Խմբային հետազոտական մեթոդի կիրառումը նպաստում է ոչ միայն հետազոտական կարողությունների զարգացմանը, այլև խմբի անդամների համագործակցությանը, աշխատանքի արդյունավետության բարձրացմանը [1]:

Առաջին տեսակ	Երկրորդ տեսակ	Երրորդ տեսակ
<ul style="list-style-type: none"> • իրավիճակ, երբ խնդրի լուծման համար առկա գիտելիքները բավարար չեն խնդրի պայմանի կամ բովանդակության ըմբռնման համար: 	<ul style="list-style-type: none"> • առկա գիտելիքներից ընտրվում է այն մասը, որն անհրաժեշտ է տրված խնդրի լուծման համար: 	<ul style="list-style-type: none"> • դպրոցականները պետք է կիրառեն նախկինում յուրացրած գիտելիքները նոր կերպ և անձանոթ իրավիճակներում:

Աղյուսակ 1. Պրոբլեմային իրավիճակների տեսակները [3]:

Աշխարհագրության ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով կիրառվող վերոնշյալ մեթոդներին բնորոշ է պրոբլեմային իրավիճակների ստեղծումը, պրոբլեմային առաջադրանքներն ու հարցերը և ուսումնական պրոբլեմների լուծումը: Այս առաջադրանքների կատարումը հենվում է դպրոցականների՝ նախկինում ձեռք բերած գիտելիքների ամրապնդման և նորի յուրացման վրա: Սա ենթադրում է նաև նոր և անձանոթ իրավիճակներում ինքնուրույն կամ ուսուցչի ուղղորդման միջոցով տրված խնդրի լուծման եղանակների որոնում կամ ունեցած գիտելիքները կիրառում:

Նախկինում յուրացրած և նոր ձեռք բերվող գիտելիքների միջև առկա հակասությունն էլ ստեղծում է մտավոր բարդություններ, պրոբլեմային իրավիճակ, որը հաղթահարելու համար դպրոցականներից պահանջվում է ինքնուրույն և ստեղծագործական մոտեցում: Պրոբլեմային իրավիճակը հիմնականում ստեղծում է ուսուցչը, սակայն

երբեմն կարող է նաև ի հայտ գալ դպրոցականների նախաձեռնությամբ: Աշխարհագրության ուսուցման շրջանակներում կիրառվում են պրոբլեմային իրավիճակների երեք տեսակներ (ըստ Ա. Մ. Մատյուշկինի), որոնք ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Վերոնշյալ իրավիճակների երեք տեսակն էլ դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման նպատակով կիրառելի են աշխարհագրության ուսուցման գործընթացում՝ նպաստելով նոր իրավիճակներում արդեն իսկ ձեռք բերած գիտելիքների օգտագործմանը, տրամաբանական և քննադատական մտածողության զարգացմանը: Ավելին, դրանք խթանում են, որ դպրոցականները կատարեն հետազոտական աշխատանքներ, նկատեն փաստերի և գաղափարների միջև առկա հակասությունը, հետազոտության խնդիրը, ձևակերպեն հետազոտության հարցը: Պրոբլեմային իրավիճակներն արդյունավետ է կիրառել ուղղորդվող հետազոտական աշխատանքների ընթացքում, երբ ուսուցիչը ղեկավարում է դպրոցականների հետազոտական գործունեությունը:

Այսպիսով, աշխարհագրության ուսուցման գործընթացում դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացումն ապահովելու համար նպատակահարմար է կիրառել ստեղծագործական ուսուցման մեթոդները (պրոբլեմային շարադրանք, մասնակի-որոնողական և հետազոտական), որոնք սահմանված կրթական նպատակներից ելնելով ապահովում են նրանց կողմից հետազոտական բնույթ կրող առաջադրանքների կատարում, դպրոցականների ստեղծագործական և քննադատական մտածողության զարգացում, հետազոտական կարողությունների զարգացում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

[1] **Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Ս. և ուրիշներ**, Համագործակցային ուսուցում, Երևան, Անտարես, 2006, էջ 124:

[2] Հանրակրթական հիմնական դպրոցի «Աշխարհագրություն» (6-8-րդ դասարաններ) և «Հայաստանի աշխարհագրություն» (9-րդ դասարան) առարկաների չափորոշիչներ և ծրագրեր, ՀՀ ԿԳ նախարարի 2012 թ. հունվարի 23-ի N 49-Ա/Ք հրամանի հավելված N 1:

[3] **Մինասյան Ա. Ա.**, Աշխարհագրության ուսուցման մեթոդներն ու միջոցները, Երևան, Հեղ. հրատ., 2011, էջ 96:

[4] https://www.spps.org/site/handlers/filedownload.ashx?moduleinstanceid=38342&dataid=21191&FileName=arts_guide_2014.pdf.

Մկրտումյան Անի

**ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ
ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ**

Բանալի բառեր՝ դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացում, աշխարհագրության ուսուցման գործընթաց, պրոբլեմային ուսուցում, հետազոտության մեթոդ:

Աշխարհագրության դասավանդման մեթոդաբանությունն աչքի է ընկնում մեթոդների բազմազանությամբ, սակայն դրանց միայն մի մասն է նպաստում դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացմանը (հիմնական դպրոցներում): Դրանք ստեղծագործական մեթոդներ են, որոնք ժամանակակից կրթությանը համապատասխան հետազոտական կարողություններ են զարգացնում: Այդ մեթոդներն են պրոբլեմային շարադրանքի, մասնակի-որոնողական և հետազոտական մեթոդները, որոնք աշխարհագրության ուսուցման գործընթացում միմյանց փոխլրացնելով ապահովում են հետազոտական բնույթ ունեցող առաջադրանքների կիրառում:

Мкртумян Ани

**ПРИМЕНЕНИЕ МЕТОДОВ ОБУЧЕНИЯ ГЕОГРАФИИ ДЛЯ РАЗВИТИЯ
ИССЛЕДОВАТЕЛЬСКИХ УМЕНИЙ ШКОЛЬНИКОВ**

Ключевые слова: развитие исследовательских умений школьников, процесс преподавания географии, проблемное обучение, исследовательский метод.

Методика преподавания географии отличается разнообразием методов, но лишь немногие способствуют развитию исследовательских умений школьников в средних школах. Среди них можно выделить творческие методы, которые развивают исследовательские умения, соответствующие современному образованию. Такими являются метод проблемного изложения знаний, частично-поисковый метод и исследовательский метод, которые обеспечивают использование исследовательских задач в процессе обучения географии.

THE USAGE OF GEOGRAPHY TEACHING METHODS FOR DEVELOPING STUDENTS' RESEARCH SKILLS

Key words: development of students' research skills (secondary schools), Geography teaching process, problem-based teaching, research-based method.

The teaching methodology of Geography has a range of teaching methods, but only some of them contribute to the development of students' research skills in secondary schools. There exist creative teaching methods which develop research skills and which correspond to the requirements of modern education. In this paper, we discuss the following teaching methods of Geography: challenge-based methods, partial-search methods and inquiry-based methods, which promote the usage of inquiry-oriented tasks in the teaching process of Geography by complementing one another.